

Գ. Ֆ. ՄՈՒՆԻՆ

ԲՐԻԳԱԴԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՔԱՂՅԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ

631.5

Մ-96

CA  $\frac{11}{431}$   
ԿՄԵԼԵՏ

631.5

Կ. 96

Գ. Գ. ՄՈՒՆԻՆ

30 JUL 20

ԲՐԻԳԱԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՔԱՂՀԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ



28881-Բ



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

04 JUL 2013

16945

# ԲՈՒՇԵՎԻԿՈՐԵՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՔԱՂԶԱՆԸ,—  
ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համկոմկուսի (բ) Կենտկոմն ու ԽՍՀՄ Ժողկոմ-  
խորհրդ Հյուսիսային Կովկասում գաղնանացանի կազ-  
մակերպման վերաբերյալ իրենց վորոշման մեջ մեր յերկ-  
րամասի առաջ հետևյալ առաջնակարգ խնդիրը դրին՝

—Սմբողջովին վոչնչացնել սուխասերը:

Առանց այս պայմանը կատարելու անկարելի յե  
բարձր բերք ստանալ, վորը պետք է լուծե այն բո-  
լոր հիմնական խնդիրները, վորոնք պետութիւնն ա-  
ռաջագրել է գյուղատնտեսութեան:

Ընկ. Սալիկը հարվածային կոլտնտեսականների ա-  
ռաջին համաժողովենական համագումարում, առաջա-  
գրելով բոլոր կոլտնտեսականներին ունեվոր դարձ-  
նելու խնդիրը, մատնանշում եր. —

«Բավական է միայն բարելավել մեքենանե-  
րի ու սրակսորների ոգսագործոււք, բավական  
է միայն բարելավել հողի մեակոււք—յեվ  
մեքեն կհաջողեցնենք այն, վոր մեր սթերքների  
բանակութիւնը կավելացնենք յերկու-յեքեք ան-  
գամ: Իսկ այդ միանգամայն բավական է բո-  
լոր կոլտնտեսականներին կոլտնտեսային դասերի  
ունեվոր աշխատավորներ դարձնելու համար:

Սմենալարված պայքար մղելով մեր մեծ առաջ-  
նորդի այդ ցուցմունքները կատարելու համար, յու-



59891-66



КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

բաքանչյուր կողմնտեսութիւնն պետք է աշխատե  
ինամբով քաղհանել ցանքերը: Քաղհանը բարձր բերք  
ստանալու վճռական մոմենտներից մեկն է:

Հի(բ)կ Կենտկոմի քարտուղար ընկ. Կազանովի-  
չը, որինակ բերելով շաքարի ճակնդեղը, ցույց տվեց,  
թէ ինչպիսի հսկայական նշանակութիւն ունեն քաղ-  
հանի աշխատանքները.—

«Շասերն ուսարութիւն չեն դարձնում ֆաղ-  
հանի աշխատանքների վրա: Վերցրել, որինա-  
կի համար, նակնդեղի ֆաղհանը: Ինչքան աշ-  
խատանք կա այստեղ: Ինչպիսի՛ շաս աշխա-  
տանք պահանջող կուլտուրա յի դա: Մեկ հեկ-  
տարի վրա ավելի քան 40 որվա աշխատանք է  
պէտք: Ուրն անգամ սեւեղ, հողը փխրացնելը,  
ճարձմանքերը փորել, նորից փխրացնել, հետո  
ստուգել, հետո նորից հողը խորը փխրացնել յեվ  
ֆաղհանել: Ինչպէ՛ս մեզանում, տեղ-տեղ այնպի-  
սի յերեվոյթներ են լինում, յերբ նակնդեղը  
պլանից ավելի յե ցանվում, բայց նույն պլանից  
պակաս բերք է հավաքվում: Վարովնետեվ նա-  
կնդեղը չեն ֆաղհանել: Իսկ ով տեսել է, թէ  
ինչպէս են աշխատում նակնդեղի վրա, նա  
հասկանում է, վոր չֆաղհանես նակնդեղը, չես  
ստանա նակնդեղ, կստանաս մեկ աստեղծող  
մասն այն ֆանակութիւն, վորը կարող էյի  
ստանալ»: (Հարվածային կուլտուրասականների  
համամիութենական համագումարում ընկ. Կա-  
զանովիչի արտասանած ճառից):

Այստեղից պետք է յեզրակացնել, վոր լավ բերք  
ստանալու համար հարկավոր է բոլշևիկորեն կազմա-  
կերպել քաղհանը:

Քաղհանի աշխատանքների կանոնավոր կազմա-  
կերպման համար մղվող պայքարի կենդանի որինա-  
կը տալիս են «250» բրիգադները և մեր յերկրամա-  
սի շատ առաջավոր կուլտուրասութիւնները:

Ահա Ղրիմի ռայոնի «Ձեմլետեկեց» (հողագործ)  
կուլտուրասութիւնը (կուլտուրասութիւնն նախագահը  
1931 թվից Չուբարյով Անդրեյն է): Այստեղ լավ  
հիմքերի վրա յե դրված ցանքերի յնամբը: «Ձեմ-  
լետեկեց» կուլտուրասութիւնը վատ բերք չի ստանում,  
նա ամեն տարի ստանում է կայուն, բարձր բերք:  
Անցյալ տարի այս կուլտուրասութիւնն մեջ քաղհանն  
սկսվեց ապրիլ ամսի յերկրորդ կեսից:

Քաղհանելու զնում էյին բոլոր աշխատունակ կու-  
տուրասութիւնները: Աշխատանքը կատարվում էր  
մանր խմբակներով: Յուրաքանչյուր կուլտուրասական  
ամրացվում էր վորոշ թվով շաքարի: Աշխատանքի  
դիսցիպլինան ուժեղ էր: Ընդհանուր առմամբ ար-  
տադրույթի նորմաները գերակատարվում էյին: Հաս-  
կավոր, հացահատիկային կուլտուրաների քաղհանի  
ժամանակ կուլտուրասականներն, այնտեղ ընդունված  
1 հեկտար նորմայի փոխարեն մշակում էյին 1,4—  
1,6 հեկտար, յեղիպտացորենի արտերում 0,25 հեկ-  
տարի փոխարեն մշակում էյին 0,4—0,5 հեկտար  
(յերբ ցանքը կատարվում էր ցանիչով): Շրջանա-  
կի ցանք կատարելիս ցանում էյին 0,75 — 0,8 հեկ-  
տար: Յեգիպտացորենը և արևածաղիկը քաղհանվում  
էյին 3 անգամ:

Ցանքերն այսպէս լավ յնամեղու հետևանքը յե-  
ղավ այն, վոր 1931 թվին կուլտուրասութիւնը ստա-  
ցավ հետևյալ քանակութիւնով բերք.—

Աշնանացան ցորեն . . . . . 19 ցենտներ  
Գարի . . . . . 10 »

Միևնույն ժամանակ հարևան կլրանտեսություններում (որինակ, Կրիմսկայա ստանիցայի «Սոցիալիզմի ուղին») բերքը կաղմում էր «Չեմլետելեց» կլրանտեսության բերքի կեսը (աշնանացան ցորեն— 7 ցենսներ և այլն), իսկ յեգիպտացորենը բոլորովին փչացավ,

Մի ուրիշ որինակ, Կապարդա-Բալկարական մարզի Նովո-Իվանովկա գյուղի «Լենինցի», կլրանտեսության մեջ, քաղհանի ժամանակ արտադրութի նորմաներն ընդհանրապես գերակատարվում էին 50—70 տոկոսով և պահպանվում էր աշխատողների լավ վորակը:

Արդեն հունիսի կեսին կլրանտեսությունն ավարտեց յերրորդ, վերջին քաղհանը բոլոր ցանքերում:

Կլրանտեսությունն այս հաղթանակները ձեռք բերեց՝ շնորհիվ դասակարգային լարված զգոնության, իր ժամանակին և խնամքով քաղհանին պատրաստվելուն և ծավալված մասսայական աշխատանքին:

Քաղհանի ժամանակ առանձնապես աչքի ընկավ 4-րդ բրիգադը, ինչպես և 10-րդը (կոմյերիտական բրիգադ), վորոնք սոցմրցման և հարվածայնության հիմունքով հասան ամենամեծ արդյունքներին:

Տիմաշևսկու ռայոնի ընկ. Ստալինի անվան բրիգադում («250»), վորի բրիգադիերն էր ընկ. Պոսոմարենկոն, քաղհանի խմբակներին հասկացվել էին վորոշ հողամասեր, սրանցից ամեն մեկում սնկված էին տախտակներ, վորտեղ գրված էր խմբակի անունը, խմբակավարի ու կլրանտեսականների անունները և մատնանշված էին նրանց ամրացված վորոշ շարքերը:

Բրիգադն ստեղծեց աշխատանքի կուռ դիսցիպլինա, պայքարում էր դիմազրկության դեմ: Նա աշխատանքները կատարում էր լավ վորակով:

Թե բրիգադիերը և թե բոլոր կլրանտեսականները պետք է լավ հիշեն, վոր մոլախոտը—դա կուլակի դաշնակիցն է: Կուլակության մնացորդները դաշտերը մոլախոտերով աղտեղելը զենք են դարձրել կլրանտեսությունների դեմ մղած պայքարում:

Այս տեսակետից առավելապես աչքի յեն ընկնում նախկին, սև տախտակին հանված ստանիցաները: Այստեղ ավելի, քան այլ տեղերում, դասակարգային թշնամին կարողացել է փաստարարություն կազմակերպել անցյալ տարվա քաղհանի աշխատանքների ժամանակ: Այսպես, Պլաստունովսկայա ստանիցայի նախկին «Կոմիստերն» կլրանտեսության մեջ փաստարարական քաղհանի ու բերքահավաքման հետևանքով, ստացվել է հետևյալ քանակությամբ բերք.—

Աշնանացորեն 1 հեկտարից	3,27	ցենսներ
Գարի . . . . .	4,23	»
Արևածաղիկ . . . . .	2,15	»
Շաքարի ճակնդեղ . . . . .	42,4	»

Իսկ այդ կլրանտեսության 4-րդ բրիգադում բերքը շատ ավելի ցածր է յեղել, այսինքն.—

Գարի մեկ հեկտարից . . . . .	3,25	ցենսներ
Շաքարի ճակնդեղ . . . . .	12,6	»
Արևածաղիկ . . . . .	1,25	»

Աշխատանքի այսպիսի արդյունքը միանգամայն հասկանալի կլինի, յեթե իմանալ, թե այդ բրիգադի կլրանտեսականներն ինչպես էին աշխատանքի դուրս գալիս: Այսպես, որինակ, մեկ տարվա ընթացքում «Կլրանտեսական» Անդրեյեվ Կաւպը վաստակեց 24 և յոթ տասնորդական աշխոր, Կուզնեցով Կուսսան-

Տիւրքեր—66 և ութ տասնորդական աշխոր, Դուբովին  
Ֆեոդոսիւն—39 և տասը տասնորդական աշխոր և  
այլն:

Հաս գյուղատնտեսական աշխատանքների ժամա-  
նակաշրջանների, այդ յերեք մակարոյձների (պա-  
րագիտների) աշխորերը բաշխվում են այսպէս.—

	Ուրախ	Ազգեկ	Մայ	Հուն.	Հուլ.	Ոգոստ.	Սեպտ.	Հոկտ.
Կուզնեցով Կոնստ.	12,2	5,8	13,3	0,8	11,5	9,7	13,7	—
Անդրեև Կարպ.	9,2	11,1	4,2	Բուրովին չի յելել աշխատանքի	,	,	,	,
Դուբովին Ֆյոդ.	14,0	11,1	14,8	,	,	,	,	,

Վերցնենք մի ուրիշ որինակ. Ումանսկայա ստա-  
նիցայի Իլիչի անվան կոլտնտեսութիւնը (ցրված է):  
Այս կոլտնտեսութեան 7-րդ բրիգադում առանց քաղ-  
հանի մնաց 72 հեկտար յեզիպտացորեն, վորը բոլո-  
րովին փչացավ: Կոլտնտեսականներից շատերը տար-  
վա ընթացքում վաստակեցին 60 աշխոր, իսկ սաբո-  
տաժի որինակ տվողները—Կոզիւ Անսոնն ու Կո-  
զիւ Իվիսիւն (աքսարված են մեր յերկրամասից)  
վաստակեցին 18—20-ական աշխոր: Այդ նույն կոլ-  
տնտեսութեան 2-րդ բրիգադում չքաղհանվեց 24 հեկ-  
տար արևածաղիկ, վորը փչացավ:

Բրիգադի գլխավոր բարոյալքողները—Մարչուկ  
Վասիլիւն և Մարչուկ Իվանը տարվա ընթացքում  
վաստակեցին հետևյալ քանակութեամբ աշխորեր.—  
առաջինը 28, իսկ յերկրորդը—31: Այդ նույն պատ-  
ճառներով 4-րդ բրիգադում ևս բոլորովին փչացավ  
40 հեկտար արևածաղիկ և 30 հեկտար գենակերչակ:  
Մեր բերած թվերը միանգամայն պարզ ցույց  
են տալիս, թե այդ կոլտնտեսութիւններում վոր-

չափ կազմակերպված եր գործում դասակարգային  
թշնամին: Այդ կոլտնտեսութիւնների ղեկավար կազ-  
մը ոժանդակում եր կուլակային ուղղակի սաբոտաժի  
և փաստարարութեան կազմակերպման, գլխավորում  
եր կուլակային սաբոտաժը:

Ներկա քաղհանի ժամանակ բոլոր կոլտնտեսու-  
թիւնները պետք է ցույց տան հարվածային աշխա-  
տանքի, բեքի համար բոլշեիկորեն կովելու որի-  
նակներ:

# ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՐԻԳԱԴԻՐ

ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵ ԲՐԻԳԱԴԵ  
ՔԱՂՀԱՆԻ ՀԱՐԿԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս տարի քաղհանի աշխատանքները մշտական արտադրական բրիգադի բրիգադիերի համար պետք է լինեն իսկական քննություն, նրա դասակարգային աչալըջության ստուգում:

Այդ աշխատանքները պետք է ցույց տան, թե բրիգադիերը վորչափ ընդունակ է անխնա պայքար մղել կուլակություն փաստարարական, քայքայիչ աշխատանքի դեմ, վորչափ ընդունակ է կազմակերպել բրիգադը՝ հարվածային աշխատանքի համար:

Կուլակության թափթփուկները պետք է կատարաբար փորձեն վիժեցնել աշխատանքի կազմակերպումը, աշխատանքի գուրս գալը: Նրանք պիտի փորձեն վիժեցնել քաղհանը, վորպեսզի վտանգի յենթարկեն բերքը:

Ահա թե ինչու բրիգադիերի ամենաառաջին պարտականությունն է բրիգագում հաստատել յերկաթե դիսցիպլինա, գորահավաքել կոլկոսետականներին՝ ժողովրդի թեմամիներ ղեմ անխնա պայքար մղելու համար: Ամեն մի ներողամտություն, ամեն մի թույլ վերաբերմունք դեպի պայքարն ընդդեմ գողերի, ծուլիերի, չարաշահողների (սպեկուլյանտների), մակաբույծների — հանդիսանում է դավաճանություն, ուղղակի ոգնություն դասակարգային թշնամուն:

Այն նախազգուշացումը, վոր արված է իՍՆՄ ժողկոմխորհի և կուսակցության կենտկոմի վորոշ-

ման մեջ («Հյուսիսային կովկասում դարնանացանի կազմակերպման միջոցառումների մասին»), թե ցանքը սաբոտաժի յենթարկող՝ ժողովրդի թշնամիների վերաբերմամբ ամեն մի ներողամտություն կհամարվի վորպես ոգնություն կուլակին և հակահեղափոխական փնասարարին, — ի հարկե պահպանում է իր ուշժր նաև քաղհանի աշխատանքների ժամանակ:

Քաղհանի ժամանակ պետք է ոգտագործել կուտնտեսություն մեջ յեղած բոլոր աշխատող ձեռքերը: Այն թերություններն ու խեղաթյուրումները, վորոնք թույլ եյին տրվել բրիգադները կազմակերպելիս և հայտնաբերվեցին ցանքի ընթացքում, պետք է մի առանձին մանրակրկիտությունամբ հաշվի առնվեն և վերացվեն մինչև քաղհանի աշխատանքների սկիզբը:

Բրիգադիերը պարտական է կազմակերպել բրիգադի արտադրական աշխատանքը, միևնույն ժամանակ քաղհանի աշխատանքները զուգակցելով ուրիշ, միևնույն շրջանում կատարվող աշխատանքներին (խոտի բերքահավաք և այլն): Բրիգադիերը դասավորում է ուժերը բրիգադի ներսում, կազմակերպում է արտադրության միջոցների ոգտագործումը, աշխատանքի հաշվառքը, գործավարձի և արտադրություն նորմաների հիմունքով գնահատում է առաջադրություն կատարման քանակն ու վորակը:

Մինչև քաղհանի աշխատանքների սկիզբը կազմվում է ագրոպլան-կարգազիրը: Ագրոպլան կարգազիրը պետք է լայնորեն քննարկվի բրիգադի արտադրական խորհրդակցություններում, վորպեսզի ամբողջովին և իր ժամանակին կատարվեն քաղհանի աշխատանքները:

Մինչև քաղհանի աշխատանքների սկիզբը պետք է կարգի բերվեն դաշտային գիշերատեղերը, աչքի ա-

ուջ պետք է ունենալ, վոր քաղհանի ժամանակ կլինեն ավելի մեծ քանակությամբ մարդիկ, քան թե գարնանը: Պետք է լավ հիմքերի վրա դրվի հասարակական սննդի գործը դաշտում:

Իր աշխատանքների ընթացքում հենվելով այն խմբակավարների և հարվածային կոլտնտեսականների ակտիվի վրա, վորոնք ստուգված են կուլակության դեմ մղված անխնա պայքարում, բրիգադիքը կիրառում է քաղհանի աշխատանքների քանակի ու վորակի ուժեղացումն ու բարելավումը. նա պետք է կազմակերպե բրիգադը՝ աշխատանքի հարվածային տեմպերի համար:

## ԱՃԻԱՏՈՂՆԵՐԻ

ԻՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄԸ

Բրիգադում քաղհանի աշխատանքները կատարվում են բացառապես մանր խմբակներով: Խմբակների կազմակերպումով պետք է ապահովվի կանոնավոր աշխատանքը, վորոշված ժամկետերում արտադրական առաջադրությունների լավ վորակով կատարումը: Փորձը ցույց է տալիս, վոր խմբակի ամենանպատակահարմար չափն է 6—8 հոգի, վորը կարող է միանգամայն ապահովել շարքահերկ կուլտուրաների միաժամանակ մշակումը շարքերում և շարքամեջերում:

Հենց քաղհանի առաջին որերից ամենադաժան պայքար պիտի մղել դիմագրկության դեմ: Յուրաքանչյուր խմբակ ստանում է քաղհանի անհրաժեշտ գործիքներ, նրան տրվում է աշխատանքի վորոշ տեղ: Խմբակի ամեն մի կոլտնտեսականի ամբացվում են քաղհանի գործիքներ: Վոչ մի թիզ հող չպիտի մատնված լինի դիմագրկության: Դրանով կարելի կլինի պարզել, թե վոր կոլտնտեսականը վորտեղ է աշխատում: Իս խմբակավարի պարտականությունն է, վորն իր աշխատանքները կատարում է բրիգադիքի ղեկավարությամբ:

Այստեղ ամենից առաջ կարևոր է ընտրել դասակարգային պայքարում ստուգված խմբակավար, վորը հավատարիմ է կոլտնտեսային շինարարության շահերին: Խմբակները կազմակերպելիս պետք է ուշադրու-

թյուն դարձնել, թե վոր կոլտնտեսականներն իրար հետ համերաշխ են աշխատում:

Քաղհանի ժամանակ կարևորագույն նշանակու-  
թյուն ունի կանանց հասուկ խմբակների  
կազմակերպումը, վորոնց պիտի գլխավորի կին-  
խմբավարուհին:

Ընկ. Ստալինը հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարում կոլտնտեսուհի կնոջ նշանակության մասին ասաց հետևյալը.—

«Կոլտնտեսություններում կնոջ հարցը մեծ հարց է, ընկերներ: Յես գիտեմ, վոր ձեզանից շատերը թեազնահասում են կանանց յեվ նույնիսկ ծաղրում նեանց: Սակայն դա վխալ է: Կոլտնտեսություններում կինը մեծ ույժ է: Այդ ույժը մոռացության տալ, նեանակում է հանցագործություն անել: Մեր պարսականու-  
թյունը կայանում է նեանում, վոր կոլտնտեսու-  
թյուններում առաջ քաշենք կանանց յեվ այդ ույժը գործի դնենք»:

Կնոջ դերն առանձնապես մեծ է քաղհանի աշխա-  
տանքներում: Այստեղ կինը վճռում է աշխատանքի հա-  
ջողությունը: Մնցյալ տարի այն կոլտնտեսությունները,  
վորոնք լուրջ կերպով զբաղվում էին կնոջ աշխա-  
տանքի կազմակերպման հարցերով, արագությամբ  
ավարտեցին քաղհանը և աշխատանքները կատարե-  
ցին բարձր վորակով:

Կրպատկինի ռայոնի «Հոկտեմբերի 12 տարի»  
կոլտնտեսության բրիգադիը («250») ընկ. Սաճեր-  
նով, քաղհանի հաջողությունների մասին պատմելիս  
շեշտում էր, վոր «բրիգադն առանձնահատուկ ուշա-  
գրություն էր դարձնում կանանց քաղհանի աշխա-

տանքներին ներգրավելուն: Բրիգադներում կանայք  
մանրակրկիտ կերպով մշակեցին քաղհանի պլանը,  
ուժերի դասավորությունը, մշակեցին արտադրույթի  
նորմաները, նայած հողամասերի աղտեղվածության  
աստիճանին: Կանանց համաձայնությամբ առանձին  
կոլտնտեսուհիներ ամրացվեցին 4—5 բակերի, թըռ-  
չուններին ու անասուններին խնամելու համար, վո-  
րոնք անհատական ոգտագործման մեջ էին գտնվում»:

Քաղհանի աշխատանքներին պետք է ներգրավեն  
բոլոր կանայք, վորոնք կարող են մասնակցել այդ  
աշխատանքներին: Քաղհանի համար կազմակերպելով  
կանաց հատուկ խմբակներ, պետք է կոլտնտեսուհի-  
ներին համարձակորեն առաջ քաշել վորպես խմբա-  
կավարուհիներ, ակտիվիստկաներ, վորոնք ստուգ-  
ված են կուլակության դեմ մղվող պայքարում, կոլ-  
տնտեսությունների ամրապնդման համար մղվող  
պայքարում:

Քաղհանի աշխատանքներին կանանց լայն ներ-  
գրավումը պարտավորեցնում է յուրաքանչյուր կոլ-  
տնտեսության, յուրաքանչյուր բրիգադին՝ աշխա-  
տանքների այդ ժամանակաշրջանում կազմակերպել  
մանկամսուրների, մանկահրապարակների լայն ցանց՝  
հենց իրենց, կոլտնտեսուհիների ինքնագործունեյու-  
թյան հիման վրա:

Քաղհանից առաջ պետք է կատարվի մասսայական  
լայն աշխատանք: Կանանց հատուկ արտադրական խոր-  
հրդակցություններում և ժողովներում պետք է քննարկ-  
վեն քաղհանի և ուժերի դասավորության պլանները:

Պետք է ստեղծել այնպիսի զրույթյուն, վորպեսզի  
յուրաքանչյուր կոլտնտեսուհու համար պարզ լինի,  
թե միայն իր ժամանակին և բարեխղճաբար կա-  
տարված քաղհանը կապահովի լավ բերքը, կուժե-

դացնի կոլտնտեսութիւնը, կբարձրացնի ապրան-  
քայնութիւնը, հետևապէս կբարձրացնի ամեն մի  
կոլտնտեսականի և կոլտնտեսունու բարեկեցութիւնը:

Յուրաքանչյուր խմբակի համար սահմանված հո-  
դամասերում կոլտնտեսականների և արտադրութիւն  
միջոցների դասավորումը կատարում է խմբակավարը՝  
բրիգադի ցուցմունքներով: Այն ժամանակ, յերբ խմ-  
բակը կատարում է առաջադրութիւնը, կտրականա-  
պէս արգելվում է կոլտնտեսականների տեղափոխու-  
թիւնը մեկ խմբակից մյուսը: Յուրաքանչյուր խմբա-  
կավար պատասխանատու յետնադրական առաջա-  
դրութիւնն իր ժամանակին յեզ ըստ քանակային ու  
վորակային ցուցանիշների կուտարելու համար: Խմբ-  
բակավարը ֆիզիքական աշխատանքից չի ազատվում  
և աշխատում է կոլտնտեսականների հետ միասին:

Հավագույն հարվածային կոլտնտեսականներից,  
կուլակային սաբոտաժի դեմ ակտիվ կռիւղներից նշա-  
նակված խմբակավարը հսկում է կոլտնտեսականների  
աշխատանքներին, աշխատում է, վոր լիովին կատար-  
վեն արտադրութի նորմաները և աշխատանքը լավ  
վորակի լինի: Աշխատանքները վերջացնելուց հետո,  
խմբակավարը հաշի յետ առնում յուրաքանչյուր կոլ-  
տնտեսականի կատարած աշխատանքը և դրանցումներ  
է կատարում կարգադրում, հետո դա հանձնում է  
բրիգադիբրին և ոգնում է նրան՝ կոլտնտեսականներին  
աշխուրեր գրելիս:

Յեթե խախտվում է բրիգադի աշխատանքների  
կարգը և կամ այդ աշխատանքները վատ են կատար-  
վում, բրիգադիբրը պարտավոր է իջեցնել կոլտնտեսա-  
կանների աշխուրերը կամ տուգանել նրանց այն արար-  
մունքների համար, վորոնց պատճառով նյութական  
վնաս է հասել կոլտնտեսութիւնը:

Կոլտնտեսութիւն վարչութիւն առաջ պետք է  
հարց դնել այդպիսի կոլտնտեսականներին վատրելու  
մասին և պետք է հարց բարձրացնել՝ բրիգադում աշ-  
խատող լավագույն կոլտնտեսականներին պարգևա-  
տրելու համար:

Բրիգադի արտադրական աշխատանքը, մարդկանց  
և արտադրութիւն միջոցների դասավորութիւնը  
մտցվում է ագրոպլան-կարգադրի մեջ:

Քաղհանի աշխատանքների համար ագրոպլան-  
կարգադիրը կազմում է ինքը, բրիգադիբրը՝ բրիգադի  
ակտիվի հետ միասին և բրիգադի տարեկան արտա-  
դրական առաջադրութիւն հիման վրա:

5989-66



Բրիգադերը պարտավոր է բրիգադի ահաբեկի հետ միասին մանրամասն ուսումնասիրել հողամասի առանձնահատկությունները, պարզել, թե յուրաքանչյուր վանդակ վորչափ է վարակված մոլախոտերով և աշխատանքների ժամկետներին համապատասխան պետք է նշվեն այն բոլոր միջոցառումները, վորոնք պիտի կիրառվեն քաղհանի ժամանակաշրջանում: Քաղհանի աշխատանքների հետ միասին ազրոպլան-կարգագրում պետք է հիշվեն նաև ուրիշ աշխատանքներ, վորոնք քաղհանի հետ գուգակցբար են կատարվում:

Ազրոպլան-կարգագրում աշխատանքները սահմանվում են յուրաքանչյուր առանձին կուլտուրայի համար, նայած թե ինչ դրություն մեջ են ցանքերը և ինչ չափով են ազատեղվել մոլախոտերով:

Աշխատանքները պիտի ազրոպլան-կարգագրում նախատեսվեն այն ազրո-կանոնների հիման վրա, վորոնք մշակված են ռայոնովորչությունների կողմից և հաստատվել են ռայգործկոմիտեում:

Ազրոպլան-կարգագրերը կազմելիս առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել ա գ ր ո ս ե խ ն ի կ ա յ ի վրա: Քաղհանի ժամանակվա ազրոտեխնիկան-դա ամենից առաջ ա շ խ ա ս ա ն ֆ ի ն ի օ ս ժ ա մ կ ե ս եր ն ե ն, ֆ ա դ հ ա ն ն եր ի ֆ ա ն ա կ ր յ ե վ ն ր ա ն ց ձ ե վ ը: Այս միջոցառումները պետք է վաղորոք լայն կերպով մշակվեն բրիգադի արտադրական խորհրդ-

դակցությունների և ժողովների կողմից, յուրաքանչյուր կուլտուրայի համար առանձին:

Յուրաքանչյուր կուլտուրայի, սկսելով աշխատանքը, պետք է դիտենա այն քանակային ու վորակային ցուցանիշները, վորոնք պիտի պահպանվեն աշխատանքների ընթացքում և վորոնց պահպանման համար նա նյութական պատասխանատվություն է կրում:

Ազրոպլան-կարգագրերը մեծ նշանակություն է ստանում, ինչպես մի գործիք այն պայքարի, վորը մղվում է աշխատանքի բարձր վորակի, ազրոտեխնիկայի համար, վորոնք գորահավաքում են կուլտուրային մասսաներին բերքատվության բարձրացման համար:

Վորակի համար մղվող պայքարը ամեն մի կուլտուրայի համար մղվող պահանջում է դասակարգային լարված և արթուն հսկողություն՝ յուրաքանչյուր խմբակում կիրառվող ազրոտեխնիկական միջոցառումների վրա: Այդ վերահսկողությունը պիտի իրագործվի ամբողջ բրիգադում արտադրական առաջադրությունների կատարման ամեն օր յա հաշվառմամբ:

Ազրոպլան-կարգագրի մյուս յերեսում որվա ընթացքում աշխատած կուլտուրայի հատկանքների քանակությունը ցույց տալու հետ, ինչպես նաև լրձկանի, ինվենտարի և նրանց կատարած աշխատանքի քանակը ցույց տալու հետ մեկտեղ, անպայման պետք է ցույց տրվի կատարված ա շ խ ա ս ա ն ֆ ի վ օր ա կ ր:

Միայն ամեն օր հսկելով քանակի ու վորակի վրա, հատուտելով աշխատանքի յերկաթե դիսցիպլինա, անբարեխիղճ աշխատանքի համար խիստ պատասխանատվության յենթարկելով ծուլերին, կորզիչներին, մակաբույծներին,— կարելի յե ապահովել ցանքերի լավ ինամբը:

Քաղհանի ազրոպլան-կարգագրի համար մղվող պայքարում յուրաքանչյուր կուլտուրայի պետք է

Համառոտ ցուցմունքներ բլ սեկը լցնելու համար

- 1) Ազրոպլան-կարգագրերը կազմվում են գ. տ. աշխատանքի մի սեզոնի համար, տասնորյակների բաժանումով:
- 2) Ազրոպլան կարգագրում մացված տրակտորային աշխատանքները գրվում են սունյակներում, բացի ինվենտարի, լծկանի, կոտնտեսականների և աշխորերի հաշվառելից:
- 3) Աշխատանքի ամեն մի տեսակ, անկախ նրանից, թե նա քանի տասնորյակում է կատարվում, նույնպես գրվում է վերջին ուղղահայաց սյունյակում—«Աշխատանքի ընդհանուր ծավալը»:

Տասնորյակներ (վոր որից մինչև վոր որը)	Աշխատանքներ (ձեռքի, ձիով և առանձին—տրակտորային)	Աշխատանքի տեղը (վանդակները № №-ը)	Աշխատանքի վորակային ցուցանիշները	Աշխատանքի ծավալը ամեն տասնորյակում (հեկտ. ցենտներ և այլն)	Աշխատանքի ժամկետը (վոր ամսաթիվից մինչև վոր ամսաթիվը)

ԱԳՐՈՊԼԱՆ-ԿԱՐԳԱԳԻՐ

Հաստատված է.....193 թ.

Վարչություն

.....կոտնտեսություն..... ԲԵՒԿԱԳԻՐ

.....ժամանակվա համար

.....ից մինչև..... 193 թ.

Աշխատանքի որերի քանակը	Արտադրություն	Աշխատանքի ամենորյա ծավալը (հեկտ. ցենտներ և այլն)	Դրան որ պետք է			Աշխատանքի միավորի գնահատման աշխորով	Ընդամենը հասնելիք աշխոր	Աշխատ. ընդհան. ծավալը (հեկտ. ցենտներ և այլն)	Ըստ ազգուկարգ.
			Ինվենտար	Լծկան	Կոտնտ.				



լավ հիշե հարվածային կոյսևեստականների համա-  
միութենական համագումարի դիմումն այն մասին,  
թե բավական չե միայն ինքդ բարեխղճաբար աշխա-  
տես: Վորպեսզի բարեխիղճ կոյտնտեսականի աշխա-  
տանքը չհափշտակեն ծուլերը, սիմուլյանտներն ու  
մակաբույծները, անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր  
բարեխիղճ աշխատող կոյտնտեսական հետևի, թե ինչ-  
պես են աշխատում մյուսները, նրանցից պահանջի  
նույնպիսի բարեխիղճ աշխատանք: Խմբակում աշխա-  
տող յուրաքանչյուր կոյտնտեսական պատասխանա-  
տու յե վոչ միայն իր համար, այլ և այդ խմբակում  
աշխատող բոլոր կոյտնտեսականների համար: Յեթե  
ինքդ լավ ես աշխատում, բայց չես պայքարում կու-  
լակության, ծուլի և մակաբույծի (պարազիտի) դեմ, ապա  
դրանով կամա-ակամա դառնում ես նրանց աջակցող:

## Տ Ի Ր Ա Պ Ե Տ Ե Լ

ՔԱՂՀԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Պայքարելով բերքի համար, մեքենա-տրակտորա-  
յին կայանները և նրանց քաղբաժինները պետք է  
կոյտնտեսություններում կազմակերպեն քաղհանի աշ-  
խատանքների նախապատրաստությունն ու անցկացու-  
մը: Նրանք պետք է կոյտնտեսականներին լիովին յուրա-  
ցնել տան այդ աշխատանքների ամբողջ ազրոտելնիկան:

Քաղհանի աշխատանքների թվին են պատկանում  
ծիլ տվող հողամասերի տափանսումը, շարքամեջերի  
քաղհանավարը, քաղհանը շարքերում, բույսերի շուր-  
ջը փորելը, նրանց ստուգումն ու ծխախոտի ծաղկա-  
հատումը (բույսերի վերին մասերի կտրատումը ծա-  
ղիկների հետ միասին):

Անհրաժեշտ է մատնանշել, վոր տարբեր շարքա-  
հերկ-տեխնիկական կուլտուրաները լավ աճելու համար  
տարբեր խնամք են պահանջում, ինչպես և քաղհանի  
տարբեր աշխատանքներ:

Որինակ, յեզիպտացորենի և արևածաղկի ծիլերը  
տափանսվում են, իսկ ուրիշ կուլտուրաներ, որինակ,  
բամբակը, գենագերչակը, շաքարի ճակնդեղը կարող  
են սաստիկ վնասվել այդպիսի աշխատանքից: Այս  
պատճառով քնքույշ ծիլեր ունեցող շարքահերկ կուլ-  
տուրաների համար տափանսելու գործողությունը չի  
կատարվում:

Թե վորքան մեծ նշանակություն ունի քաղհանի  
աշխատանքների կատարումն իր ժամանակին, այդ

յերեւում ե նրանից, վոր համաձայն Հյուսիսային Կովկասի «Կրուզիկ» կոչված փորձակայանի տվյալների, արևածաղկի հողի փորփորման ջնշին ուշացման հետևանքով բերքը պակասել է 8 տոկոսով:

Բոլոր կոլտնտեսականները պետք է ամենամեծ ուշադրութուն դարձնեն քաղհանի ամեն մի աշխատանքն իր ժամանակին կատարելու վրա, վորպեսզի այդպիսով հաջողեցնել բերքատվության վճռական բարձրացումը:

Քաղհանի բոլոր աշխատանքներն իր ժամանակին և կանոնավոր կատարելու անհրաժեշտ պայմանը՝ կուլտուրաների աճման ընթացքին մշտապես հետևելն է:

Սովորաբար քաղհանի աշխատանքները սկսվում են ծիլերը յերևալու հետ միասին: Այդ աշխատանքները գլխավորապես նրանումն են կայանում, վոր հավաքվում են մոլախոտերը, փխրունացվում է հողը և նոսրացվում են շարքահերկ կուլտուրաների մեծամասնության ծիլերը:

Ցանքերի խնամքի առաջին աշխատանքներից մեկն է այնպիսի կուլտուրաների ծիլերի տափանումը, ինչպիսին են՝ յեգիպտացորենը, արևածաղիկը, սոյան:

Տափանումը պետք է կատարվի ծիլերը յերևալու հետ միասին: Արևածաղիկը պիտի տափանվի, հենց վոր յերևա իսկական տերևների առաջին գույգը:

Սովորաբար ծիլերի տափանումը կատարում են սովորական ատամնավոր տափաններով մեկ անգամ, շարքերի լայնությամբ և տափանը ձիերին լծած: Ավելի պինդ հողերի վրա և ծիլերի խտության դեպքում հաճախ տափանումը կատարվում է յերկուանգամ:

Շարքահերկերի տափանած ծիլերը մի քանի օրից հետո յենթարկվում են առաջին քաղհանին, վորը տեղի յե ունենում շարքամեջերում և շարքերում:

Որինակ, յեգիպտացորենի տափանած ծիլերի առաջին քաղհանը պիտի վերջանա, յերբ ծիլերի բարձրությունը լինի 15 սանտիմետր: Իսկ գենագերչակի (վորի ծիլերը չեն տափանվում) առաջին քաղհանն անհրաժեշտ է կատարել վոչ ուշ, քան մշտական տեղեկների առաջին գույգի յերևալը:

Շարքահերկ կուլտուրաների քաղհանի միջոցով վոչնչանում են մոլախոտերը և փխրանում է հողի վերին շերտը: Իրա շնորհիվ վոչնչանում է գյուղատնտեսական կուլտուրաների համար վնասակար հողի կեղեվը, վորը հաճախ կազմվում է մանավանդ հորդ անձրեվներից հետո: Այսպիսով լավագույն պայմաններ են ստեղծվում շարքահերկ կուլտուրաների աճման համար և, հետեապես, նրանց բերքատվությունն ավելացնելու համար:

Շարքամեջերում շարքահերկ կուլտուրաների քաղհանը պետք է կատարել ձիու կամ տրակտորային քաղհանչիներով, իսկ շարքերում — ձեռքերով: Իսկ շարքի ճակնդեղի հենց առաջին քաղհանը կարող է կատարվել կամ ամբողջովին ձեռքով, կամ ձիու պլանետներով, շարքամեջերում, իսկ շարքերում — ձեռքով: Հասկավոր կուլտուրաների քաղհանը ձեռքով է կատարվում:

Քաղհանիչը աշխատանքի համար պետք է վաղորոք պատրաստ լինի: Անհրաժեշտ է, վոր քաղհանիչի բոլոր կտրող մասերը բավականաչափ սուր լինեն և կանոնավոր զրված լինեն իրենց տեղը: Թե քաղհանիչ մեքենան մի անգամ անցնելիս ինչ լայնության տարածություն պիտի քաղհանե, այդ կախված է շարքամեջերի լայնությունից և դա այնպես պիտի անել, վոր բույսերի արմատները չվնասվեն և բույսերը չթաղվեն հողում: Քաղհանիչի բանուկ մասերն ըն-

Թացքի ժամանակ պետք է առնվագն 10—12 սան-  
տիմետր հեռու լինեն բույերի շարքերից:

Վորպեսզի հողը բոլորովին չչորանա, շարքամեջե-  
րի քաղհանավարը չպետք է շատ խորը լինի: Քաղհա-  
նավարը պետք է կատարել վոչ ավելի, քան 6 սան-  
տիմետր խորությամբ:

Անհրաժեշտ է խոշոր չափով ընդլայնել Վեքենա-  
յացումը: Մեքենայական քաղհանավարը կատարվում  
է այն պայմանով, վոր տրակտորը շարժվելով շարքա-  
մեջերի յերկարությամբ, իր անիվներով չվնասի  
բույսերին: Զանազան տրակտորներ կարող են գոր-  
ծածվել քաղհանավարի համար, նայած այս կամ այն  
կուլտուրայի շարքամեջերի լայնության:

Արևածաղկի, գենագերչակի, բակլայաբույսերի  
մեքենայական քաղհանի համար, յերբ շարքամեջերի  
լայնությունը 60 սանտիմետր է, կարող է գործած-  
վել «Փորզգոն» 10/20 ձիու ուժի, «Ինտերնացիոնալ»  
10/20 ձիու ուժի տրակտորները: Արեվածաղկի և  
գենագերչակի համար, յեթե շարքամեջերի լայնու-  
թյունը 70 սանտիմետր է,—«Ֆ. Պ.» 19/20 ձիու  
ուժանոց, «Փորզգոն» 10/20 ձիու ուժանոց, «Ին-  
տերնացիոնալ» 10/20 և 15/30, «ՍՏԶ» «Զոն-Իր»  
17/27 ձիու ուժանոց տրակտորներ. յեզիպտացորենի  
համար, յերբ շարքամեջերի լայնությունը 90—100  
սանտիմետր է, նույն տրակտորները:

Մեքենայական քաղհանի համար տրակտորներին  
կցվում են տրակտորային կամ ձիու քաղհանիչներ:  
Կցվող ձիու քաղհանիչների թիվը կախված է տրակ-  
տորի գործողությունից: Որինակ, «Ֆ. Պ.» տրակտո-  
րին կարելի է կցել 6—8 հատ միաձի քաղհանիչ-  
ներ, «ՍՏԶ» տրակտորին—12 քաղհանիչներ:

Կցվող քաղհանիչներից ամենից շատ է տարած-

ված № 8 տրակտորային քաղհանիչը, վորը պատ-  
րաստվում է «Կարմիր Ակսայ» գործարանում: Այս  
քաղհանիչը կարելի է բանեցնել, յերբ շարքամե-  
ջերի լայնությունը 50-ից մինչև 100 սանտիմետր է:

Շարքահերկ կուլտուրաների տրակտորային և ձիու  
քաղհանի ժամանակ աշխատանքի արտադրողականու-  
թյունը զգալի չափով կբարձրանա, յեթե ցանքը կա-  
տարված է խմբացանի, շախմատային ձեվով: Այս դեպ-  
քում քաղհանավարը (տրակտորային կամ ձիու) կարող  
է կատարվել վոչ թե մեկ, այլ մի քանի ուղղությամբ:

Շարքամեջերի քաղհանավարի հետ միասին պետք  
է կատարել և շարքերի քաղհանը: Յեզիպտացորենի,  
արևածաղկի քաղհանի ժամանակ պետք է կատարել  
նաև ծիլերի նոսրացումը: Այս աշխատանքը սովորա-  
բար ձեռքով է կատարվում:

Յեզիպտացորենի ծիլերի նոսրացումը տեղի է  
ունենում առաջին ու յերկրորդ քաղհանի ժամանակ:  
Առաջին նոսրացումը կատարվում է յեզիպտացորենի  
համար պահանջվող շարքերի բույսերի միջև յեղած  
տարածության կեսում, իսկ յերկրորդ նոսրացումը  
—լրիվ տարածության վրա: Իսկ արևածաղկի ծիլե-  
րի նոսրացումը պիտի կատարել առաջին քաղհանի  
հետ միաժամանակ, շարքերի միջև յեղած ամբողջ  
տարածության վրա, յեթե վնասատուները չեն սպառ-  
նում արևածաղկի ծիլերին: Արևածաղկի ծիլերի նոս-  
րացումը պետք է կատարել վոչ ուշ, քան իսկական  
տերևների յերկրորդ գույգի յերևալը:

Գենագերչակի ծիլերի նոսրացումը կատարվում է  
յերկրորդ քաղհանի ժամանակ, իսկ ավելորդ բույսե-  
րը պետք է վոչ թե պոկվեն, այլ կտրվեն, քանի վոր  
պոկելու դեպքում բույսը դուրս քաշելիս կարող են  
պոկվել նաև հարեվան ծիլերը, վորոնք պետք է թողն-

վեն շարքերում, իսկ ավելի բուժեղները մնում են: Շաքարի ճակնդեղի նոսրացումը տեղի յե ունենում ձեռքով կամ մեքենայով, գնդածաղկից (шаровка) հետո: Այս աշխատանքը պետք է կատարել իսկական տեղերի առաջին գույգը յերևալուց անմիջապես հետո: Վերը հիշված նոսրացումից հետո տեղի յե ունենում շաքարի ճակնդեղի մնացած բույսերի նոսրացումը ձեռքով: Մի քանի օրից հետո պետք է ստուգվեն բույսերը: Կերի ճակնդեղի ծիլերի նոսրացումը տեղի յե ունենում բույսի 5 տերևները յերևալու ժամանակ: Ծիլերը նոսրացնելիս շարքերում գտնվող բույսերի միջև տարածությունն է թողնվում՝ նայած այս կամ այն բույսի շաքարամեջերի լայնության: Շաքարամիջերի լայնությունը շատ լինելու դեպքում շարքերում գտնվող բույսերի միջև տարածությունը քիչ է վերցվում: Որինակ, յերբ յեգիպտացորենի շաքարամեջերի լայնությունը 90 սանտիմետր է, շարքերում գտնվող բույսերի միջև տարածությունը պիտի լինի 30—35 սանտիմետր, իսկ յեթե շաքարամեջերի տարածությունը 100 սանտիմետր է, — 25—30 սանտիմետր: Արևածաղկի շարքերում գտնվող բույսերի միջև տարածությունը պիտի թողնել 85—40 սանտիմետր, յեթե շաքարամեջերի տարածությունը 60 սանտիմետր է:

Շաքարների կուլտուրաների առաջին քաղհանը սովորաբար շարունակվում է մոտավորապես 6—7 օրվա ընթացքում: 2—2½ շաբաթից հետո կատարվում է յերկրորդ քաղհանը:

Քաղհանների թիվը կախված է նրանից, թե ինչ չափով են դաշտերն աղտեղված մոլախոտերով: Ավելի շատ աղտեղված հողերում պիտի կատարել 3—4 քաղհանավար (շաքարամեջերի), իսկ մաքուր հողերում կարելի յե բավականանալ նույնիսկ շաքարամեջերի յեր-

կու քաղհանավարով: Շաքարների կուլտուրաների շարքերը պետք է քաղհանել սովորաբար յերկու անգամ: Կոլտնտեսականների կողմից քաղհանային աշխատանքների տեխնիկայի լրակատար յուրացումը.— Այդ ագրուտեխնիկայի կանոնավոր և իր ժամանակին կատարումը.—

Համառ պայքարը կոլտնտեսություններում աշխատանքային կուռ դիսցիպլինայի համար, կոլտնտեսականներին 100% աշխատանքի դուրս գալու համար.— Համառ պայքարն ընդեմ ծուլերի, կորզիչների կուլակության և սպիտակ-գվարդիական մնացորդների — Ահա սրանք են քաղհանը հաջողությամբ կատարելու հիմնական պայմանները:



Կոլտնտեսություններում աշխատանքի ճիշտ կազմակերպումը հնարավոր է միայն այն պայմանով, յեթե բոլոր աշխատանքները կատարվեն միայն գործավարձի հիմունքով, յեթե հաստատվի աշխատանքային կուռ ղիսցիպլինա:

Շատ կոլտնտեսություններ—մանավանդ Կուբանում,—դեկավարվելով կուլակության գործակալների կողմից, անցյալ տարի գործավարձը կիրառեցին ձեվականորեն, վիժեցնելով կոլտնտեսությունների աշխատանքային ղիսցիպլինան:

Կրասնոդարի ռայոնի Նովո-Վիլիչկովսկայա ստանիցայի կոլտնտեսություններում մինչև անցյալ տարվա հունիս ամսի 5-ը հասկավոր կուլտուրաները խեղդվում էին մոլախոտերի մեջ, իսկ քաղհանը նույնիսկ չէր ել սկսած: Շարքահերկերի քաղհանի համար 3583 աշխատունակ մարդկանցից միայն 694 էր աշխատանքի դուրս գալիս: «2-րդ հնգամյակ» կոլտնտեսության մեջ տղամարդիկ քաղհանին բոլորովին չէին մասնակցում: Գործավարձի փոխարեն իսկապես գոյություն ուներ կորզողություն, որավարձ:

Դասակարգային թշնամին կազմակերպում էր սաբոտաժ, վորի նպատակն էր վիժեցնել ցանքերի խնամքի ամենապարզ ազրոկանոնները, քայքայել կոլտնտեսությունները: Հետևանքն այն յեղավ, վոր կոլտնտեսային զաշտերը ծածկվեցին մոլախոտերով:

Այն կոլտնտեսություններում, վորտեղ գոյություն ուներ դասակարգային զգոնություն, աշխատանքի ղիսցիպլինա, վորտեղ ճիշտ էր կազմակերպված աշխատանքը, ճիշտ էր կազմակերպված գործավարձը,—քաղհանի աշխատանքները հաջողությամբ էին անցնում:

Գործավարձի կազմակերպման հիմնական պայմանն է արտադրույթի ճիշտ նորմաների սահմանումն ու աշխատանքի գնահատումն աշխորերով: «Վորտեղ չկան արտադրույթի նորմաներ, այնտեղ չկա կազմակերպված ցնեստություն» (Յակովլև):

Յուրաքանչյուր կոլտնտեսություն քաղհանի աշխատանքների համար պետք է ունենա արտադրույթի նորմաներ, հաշվի առնելով իր տնտեսության առանձնահատկությունները, հողամասերի ազտեղվածությունը մոլախոտերով, ցանքի ձևը, հողի վիճակը, լժկանը և այլն:

Չի կարելի նորմաների սահմանմանը մոտենալ կարինետային կարգով, ձևականորեն, ինչպես այդ յեղավ մի շարք կոլտնտեսություններում, գարնանացանի կամպանիայի ժամանակ: Նորմաները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել լավագույն կոլտնտեսականների փորձը, արտադրույթի նորմաները քննել կոլտնտեսության և յուրաքանչյուր առանձին բրիգադի ընդհանուր ժողովում:

Պակաս չէին այնպիսի դեպքեր, յերբ արտադրույթի նորմաները, վորոնք հանձնարարված էին ռայոնական կազմակերպությունների և մեքենատրակտորային կայանների կողմից, կոլտնտեսության մեջ ընդունվում էին մեքենայաբար, առանց ճշտելու թե ամբողջ կոլտնտեսության մեջ և թե բրիգադներում: Արտադրույթի նորմաներ սահմանելուն այսպիսի մոտեցումը կարող է հանգել յերկու վտան-

զավոր մոմենտները.—կոլտնտեսութեան կամ յուրաքանչյուր առանձին բրիգադի պայմաններում հանձնարարված նորման կարող է լինել կամ չափազանց բարձր, կամ չափազանց ցածր:

Որինակ, կոլտնտեսութեանը, շնորհիվ հողը ցանքից առաջ և իր ժամանակին լավ մշակելուն, սերմացուն խնամքով մաքրելուն, մոլախոտերի սերմերի տարածումը կանխելուն, ունի մոլախոտերով քիչ վարակված ցանքեր: Իսկ տարբեր բրիգադներում հողի ադադովածութեան աստիճանը տարբեր է: Յենթադրենք, աշնանացան հասկավոր կուլտուրաների քաղհանի ժամանակ մեկ կոլտնտեսականի միջին նորման 0,5 հեկտար է: Յե՛վ, վորովհետև այդ կոլտնտեսութեան մեջ ցանքերը քիչ են վարակված, ուստի ամեն մի կոլտնտեսական կարող է քաղհանել 0,75 հեկտար, իսկ կոլտնտեսութեան առանձին, առաջավոր բրիգադներում, մեկ կոլտնտեսականը կարող է քաղհանել մինչև մեկ հեկտար:

Այսպիսով նորման գերակատարվում է 50 տոկոսով: Այս հանգամանքի շնորհիվ գերածախսվում, շոայլվում են աշխորերը, հետևապես իջնում է նրանց արժեքը:

Անբարեխիղճ կոլտնտեսականները կողովեն զրանով, փոխանակ փնտոելու բոլոր հնարավորութեանները աշխատանքներն ավելի արագ ավարտելու համար: Գործնականում, կոլտնտեսութեաններում պատահում են նաև հակառակ դեպքեր, յերբ արտադրույթի նորմաներն ընդունվելով՝ առանց կոլտնտեսականների քննարկմանը դնելու, խիստ բարձր են լինում:

Նորմաների ամեն մի չափազանցումը կամ պակասեցումը միմիայն նպաստավոր պայմաններ կստեղծ-

ծի դասակարգային թշնամու աշխատանքի համար: ԽՍՀՄ Հողօրհամար և Հյուսիսային կովկասի յերկրային կազմակերպութեանները քաղհանի հիմնական աշխատանքների համար սահմանել են արտադրույթի հետևյալ որինակելի նորմաները.—

1) Յեգիպացորենի ու արեվածաղկի ձեռքի ֆադհանը 1 հեկտարին 5—7 մարդ:

2) Յեգիպացորենի յե՛վ արեվածաղկի ձիու ֆադհանը 1 հեկտարին 3—4 մարդ:

3) Փխուրնացումը ձիու պլանետով—1—1<sup>1/2</sup> հեկտար:

4) «Ուկրաինկա» ձիու փխրիչով հողի փրխացումը 4<sup>1/2</sup>—5<sup>1/2</sup> հեկտար:

5) Ճակնդեղի սնկելը 1 հեկտարին 5—6 մարդ:

6) Նոսրացում—1 հեկտարին 15—17 մարդ:

7) Չեռֆի ֆադհան—1 հեկտարին 8—10 մարդ:

8) Ասուզում—1 հեկտարին 6—7 մարդ:

Ռայոնական կազմակերպութեանները և ՄՏԿ-ներն արտադրույթի նորմաներ սահմանելիս, պետք է յեղակետ ունենան արտադրույթի այս որինակելի նորմաները, նրանց մեջ մտցնելով անհրաժեշտ ճշտումներ, հաշվի առնելով տվյալ ոայոնի առանձնահատկութեանները:

Իր հերթին կոլտնտեսութեանը, ստանալով արտադրույթի որինակելի նորմաները (ոայոնական կազմակերպութեաններից և ՄՏԿ-ից), ճշտում է դրանք՝ համաձայն իր տեղական պայմանների, ամբողջ կոլտնտեսութեան, առանձին բրիգադի և ապա խմբակի աշխատանքի առանձնահատկութեանների:

Քաղհանի մյուս աշխատանքների վերաբերմամբ հետաքրքրական է բերել արտադրույթի նորմաները

մեր յերկրամասի առանձին կոլտնտեսությունների փորձից (Կրիմի ռայոնի «Զեմլետե, եց» և Կաբարդա-Բարկարայի ինքնավար մարզի «Անխնցի» կոլտնտեսություններ).—

1) Հացահատիկային հասկավոր կուլտուրաների ձեռքի քաղհան—1 հեկտարին 2 մարդ:

2) Կենսաֆի, վարսակի համատարած քաղհանը լծկանով—1 հեկտարին 6 մարդ:

3) Այդ նույն կուլտուրաների քաղհանը ձիաքաղհանից հետո—1 հեկտարին 3 մարդ:

4) Կարտոֆիլի համատարած քաղհանը փետատներով—1 հեկտարին 6 մարդ:

5) Կարտոֆիլի շարքերի քաղհանը ձիու քաղհանից հետո—1 հեկտարին 3—5 մարդ:

6) Կարտոֆիլի համատարած քաղհանը փետատներով, բուկը տալու հետ միասին—1 հեկտարին 9 մարդ:


7) Յեզիպտացորենի քաղհանը՝ նրա բույսերի շուրջը, խմբացանի դեպքում—1 հեկտարին 2 մարդ:

Ճիշտ նորմաներ սահմանելու համար վճռական նշանակություն ունեն արտադրական խորհրդակցությունները՝ կոլտնտեսային ակտիվի լայն աջակցությամբ:

Այդ խորհրդակցություններում պետք է մշակվեն արտադրույթի նորմաներն ամեն տեսակ աշխատանքի համար: Նորմաները պիտի վորոշվեն անցյալ տարիներում բարեխիղճ կոլտնտեսականների փորձի հիման վրա:

Սահմանելով արտադրույթի նորմաները, յուրաքանչյուր բրիգադ պետք է հայտնաբերի դասակարգային լարված արթնություն, անխնա պայքար մղելով կուլակուլթյան ու նրա գործակալների փորձերի դեմ,

վորոնք ամեն միջոց գործ են դնում արտադրույթի նորմաների կատարումը վիժեցնելու համար: Սահմանախիտ պատասխանատվության պիտի յենթարկվեն ծուլերը, սիմուլյանտներն ու մակաբույծերը:



ԽՍՀՄ Հողփողկոմատն իր այս տարվա փետրվարի 28-ի վորոշմամբ («Կոլտնտեսություններում գանազան գյուղատնտեսական աշխատանքներն աշխորերով գնահատելու մասին»), քաղհանի աշխատանքները դասում ե վեցերորդ, ճիւղերորդ և չորրորդ խմբակներում:

Ուրեմն այս տարի քաղհանի համար աշխորվա գնահատումն զգալի չափով բարձրանում ե: Յեթե առաջ բոլոր քաղհանային աշխատանքները պատկանում եյին 3-րդ խմբակին (կար 5 խմբակ), ապա այժմ արտադրույթի նորման կատարելու համար սրվում ե 1,14-ից մինչև 1,75 աշխոր, նայած աշխատանքի զժվարության:

Քաղհանի աշխատանքներն ըստ խմբակների բաժանված են այսպես.—

6-րդ խմբակ—նակնդեղի նուրացում:

5-րդ խմբակ—սեխնիկական կուլտուրաների (գենագերչակ, սոյա յեվ այլն), յեգիպացորենի (բացի նակնդեղի նուրացումից) Եարբամեջյան մեակում:

4-րդ խմբակ—բանհարանոյային յեվ այլ կուլտուրաների Եարբամիջյան մեակում:

6-րդ խմբակում դասված քաղհանի աշխատանքների համար կոլտնտեսականը, վորը կատարում ե

կոլտնտեսության վարչության կողմից սահմանված արտադրույթի նորման, պետք ե ստանա 1,75 աշխոր: 5-րդ խմբակին պատկանող աշխատանքների համար պետք ե տրվի 1,5 աշխոր և 4-րդ խմբակի աշխատանքների համար—1,25 աշխոր:

Հողփողկոմատի կողմից սահմանած քաղհանի աշխատանքների գնահատումը և նրանց բաշխումն ըստ խմբակների՝ կոլտնտեսության վարչությունը պետք ե ճշտե տեղում, անպայման հաշվի առնելով տեղի, հողամասի առանձնահատկությունները (մոլախոտերի գոյության աստիճանը, լծկանի վիճակը և այլն):

Աշխատանքների գնահատումը ճշտվում ե վորթե սահմանափակ շրջանում, կոլտնտեսության վարչության գրասենյակում միայն, այլ արտադրական խորհրդակցություններում ու փողովներում կոլտնտեսականների լայն մասնակցությամբ:

Քաղհանի բոլոր աշխատանքները գնահատվում են՝ նայած մշակված հեկտարների քանակության, անպայման հաշվի առնելով աշխատանքի վորակը (քաղհանի լայնությունը, խորությունը, քաղհանը վորոշված ժամկետերում կատարելը, վնասվածքների բացակայություն և այլն):

Յեթե, որինակ, կոլտնտեսականը քաղհանել ե 0,5 հեկտար յեգիպացորեն, վորը ցանված ե խմբացանի ձևով, ապա այդ դեռ ևս քիչ ե նրան հասանելիք 0,88 աշխորը տալու համար: Հարկավոր ե գիտենալ, թե ինչ վորակ ունի այդ աշխատանքը: Սրբոյք չե՞ն վնասված բույսերը, վորչա՞փ մաքուր ե կատարված քաղհանը և այլն:

Հարկածային կոլտնտեսականների համամիութենական համագումարի դիմումը փոխադարձ վերահսկողության և կոլտնտեսականների կողմից աշխատանքների

տանքի վորակի հսկողութիւն կազմակերպելու վե-  
րաբերյալ՝ պետք է կիրառվի յուրաքանչյուր բը-  
գադում ու խմբակում:

Անբարեխիղճ աշխատանքի բոլոր դեպքերը հենց  
նույն օրը պետք է քննարկվեն բըրգադի արտադ-  
րական խորհրդակցութեան մեջ և մեղավորները պետք  
է համապատասխան պատիժ ստանան:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Խմբակներից աշխատանքներն ընդունելու կարգը  
պետք է ապահովի խմբակի և յուրաքանչյուր ա-  
ռանձին կուտնտեսականի կատարած աշխատանքի  
քանակի ու վորակի հաշվառքը:

Հոդժողկոմատն իր փետրվարի 28-ի վորոշման  
մեջ պարզ ասում է,—

«Ի նկատի ունենալով, վոր անցյալ տարի շատ  
դեպքերում տեղի յեր ունեցել աշխատող կուտնտե-  
սականներին աշխուրբի բաշխումն անկախ վորակից,  
ԽՍՀՄ Հոդժողկոմատն առաջարկում է կուտնտեսու-  
թիւնների վարչութիւններին սահմանել աշխատանք-  
ներն ընդունելու հետեյալ կարգը —

ա) Թե խմբակի յեվ թե առանձին կոյսնե-  
սականի կողմից աշխատանքներն ավարտվե-  
լուց հետո, այդ աշխատանքներն ընդունում է  
բըրգադիրը:

բ) Արգելել բըրգադիրներին՝ ընդունել յեվ  
հաւելել աշխուրեք այնպիսի աշխատանքի հա-  
մար, վորը վաս վորակով է կատարված (վարք  
բացատրելով, քաղհանի ժամանակ մոլախոսք  
թողնելը, վոյ լրիվ կալս, կորուսներ բերհա-  
վախման ժամանակ, վաս հունձ յեվ այլն):

գ) Բըրգադի աշխատանքը, սրա վերջանա-  
լուց հետո, ընդունում է կոյսնեստութեան հա-

խագահը կամ նրա տեղակալը, իսկ յերբ այդ աշխատանքները անբավարար են, կոյսնեստութայան վարչութիւնը մինչեւ 10 տոկոսով պակասեցնում է աշխատեցիկի ընդհանուր թիվը, վորոնք վասակել է բրիգադը, այդ թվում նայել բրիգադիւրը: ղ) Յեթե կոյսնեստութայան բրիգադը սիջին բերից ավելի յե ստանում, բրիգադի բոլոր անդամներին սալ աշխատեք բոլոր վասակած աշխատեքի 20 տոկոսի սահմաններում, ի հաշիվ այն աշխատեքի, վորոնք պիտի գեղջվեն (մինչեւ 20 տոկոս) կոյսնեստութայան միջին բերից պակաս բերք ստացած բրիգադներից»:

Ամբողջովին ոգտագործելով Հողժողկոմատի այս փորձումը, կոյսնեստութիւնները պետք է աշխատեն մանրակրկիտ խնամել ցանքերը: Մասնաշախատանքները փոխադարձ վերահսկողութիւն կազմակերպելու դեպքում վոչ մի շարք անփութ կերպով չի քաղհանվի: Յուրաքանչյուր կոյսնեստական պետք է հիշե, վոր մոլախոտերի դեմ մղվող պայքարը մի կարևորագույն միջոցառում է բարձր բերք ստանալու համար: Կոյսնեստականները պետք է ոգնեն խմբակավարներին հետևելու աշխատանքների վորակին: Ծուլերի, թափթփվածների, դասակարգային թշնամու բոլոր գործակալների դեմ մղվող պայքարը պետք է լինի միանգամայն խիստ: Պետք է կոյսնեստականին պատմել, վոր ամեն մի չքաղհանված շարք պակասեցնում է բերքը, հետևապես նաև պակասեցնում է կոյսնեստութայան և կոյսնեստականի յեկամուտը:

Հողժողկոմատի փորձումն ամենից առաջ հարվածում է անփութներին: Վատ աշխատող անբարեխիղճ կոյսնեստականին տուգանելը քիչ է, հար-

կավոր է ստիպել նրան նորից կատարել աշխատանքը և միայն դրանից հետո նրան աշխտերը տալ:

Կոյսնեստութայան վարչութիւնը բրիգադի և բրիգադիւրի աշխատանքը գնահատում է կատարված աշխատանքի քանակն ու վորակն ստուգելուց հետո, վորի մասին կազմվում է ստուգիչ—հաշվառքային կոմիտեայի հատուկ ակտը, վորի ձևը մենք բերել ենք այստեղ (տես էջ 44 և 45):

Յեթե աշխատանքն անբավարար է կատարված, վարչութիւնը պակասեցնում է բրիգադի և բրիգադիւրի վաստակած աշխտերի թիվը—10 տոկոսի սահմաններում: Յեթե կոյսնեստութայանը նյութական փնաս է հասել, վարչութիւնը պատասխանատուութիւն է յենթարկում բրիգադիւրին:

Խմբակավարին աշխտերը են տրվում այնպես, ինչպես և բոլոր կոյսնեստականներին, ըստ արտադրույթի նորմաների, քանի վոր խմբակավարը, ինչպես հայտնի յե, ֆիզիքական աշխատանքից չի ազատվում: Բրիգադին ոգնելու և խմբակում կազմակերպչական աշխատանք կատարելու համար խմբակավարին լրացուցիչ աշխտեր են տրվում ըստ նորմաների, ռայոնական հողային վարչութիւն հատուկ ցուցմունքին համապատասխան:



Քաղհանի աշխատանքներին պետք է մասնակցեն բոլոր կոլտնտեսականները և նրանց ընտանիքների անդամները, վորոնք կարող են մասնակցել այդ աշխատանքներին:

Այս ուղղութիամբ մի առանձին նշանակություն ունի աշխատանքի իր ժամանակին և ճիշտ հաշվառքը:

«Վորսեղ չկա հաշվառք, այնսեղ չկա խոսք սնեստություն, վորսեղ չկա հաշվառք,—չկա կոյսնեստություն, վորպես կազմակերպված սնեստություն: Ահա թե ինչու այժմ մեզ համար կոյսնեստություններում հաշվառքը վնասկան խնդիր է» (կոլտնտեսային շինարարության մասին խորհուրդների 6-րդ համագումարում ընկ. Յակովլևի ղեկուցումից):

Մինչդեռ մի շարք կոլտնտեսություններում, կուլակային ազդեցության հետևանքով, վորոշակի թերագնահատվում է այս կարևորագույն միջոցառումը:

Դասակարգային թշնամին փորձում է ստեղծել այնպիսի պայմաններ, վորպեսզի կոլտնտեսականը վստահ չլինի, թե նրա աշխատանքը ճիշտ է հաշվի առնվում:

Կուլբանում, վորտեղ բացակայում էր առանձին կուսակցական կազմակերպությունների հեղափոխական արթնյունությունը, կուլակին ու վնասարարին հաջողվեց ավելի, քան մի այլ տեղում,—խցկվել կոլ-

տնտեսությունների հաշվառքի ապարատը, վորպեսզի կազմակերպել աշխուրների հափշտակությունը, աշխուրերը տալ ծուլյերին և զրկել բարեխիղճ կոլտնտեսականներին:


Բնորոշ է նախկին, սև տախտակին հանված Տեմիրգոյեվսկայա ստանիցայի «Մոլոտ» կոլտնտեսությունից № 5 բրիգադի բրիգադիրի հայտարարությունը:

«Իմ բրիգադում ցուցակավար եր կոյսնեստություն խցկված, սանիցայի ասամանի նախկին ոգնական Կուզմա Զեմկյակովը: Մեր կոյսնեստային շինարարության այդ թեմամի մարդը ինչո՞վ եր գրադվում.—որեցոր հարբեցողությամբ եր գրադվում: Դաճում լինում եր շաբաթ մի անգամ: Դժվար եր լինում նրան գրանել, կանչել: Կոյսնեստականների աշխատանքներում անկանոն գրանցումներ եր անում: Արսադրույքը վերցնում եր այժի չափով, հավասար բաժանում, ծուլյերին ու հարվածայիններին իրար խառնում—բոլորին մի սանդրի կսավով չափում: Մրանից ղնկնում եր կոյսնեստականի անհագրգավածությունը, նա դժգոն եր լինում»:

Պետք է ստուգել այն մարդկանց, վորոնք պիտի կատարեն քաղհանի հաշվառքը: Հաշվառք կատարողները—հաշվառիչները, հաշվետարները և հաշվապահները պետք է լինեն ստուգված, ազնիվ մարդիկ, վորոնք անընդունակ են խաբելու կոլտնտեսականներին և պետությունը:

Աշխատանքի հաշվառքը պիտի կատարվի ամեն օր: Կոլտնտեսականների աշխատանքը հաշվի առնելիս, պետք է աչքի առաջ ունենալ կատարված աշխատանքի թե քանակը և թե վորակը:

Խմբակում կոլտնտեսականների աշխատանքի ամենորյա հաշվառքը կատարվում է բրիգադիորի ցուցմունքներով և նրա հսկողությամբ: Հինգ որը մեկ անգամից վոչ պակաս պետք է հաշվել կոլտնտեսականների վաստակածը: Աշխուրդը հաշվում և աշխարհույկներում գրանցում են հաշվառիչները:



## Ծ Ա Վ Ա Լ Ե Լ

ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՈՒԺԵՂԱՑՆԵԼ  
ԲՐԻԳԱԴԻ ԱԿՏԻՎԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսություն մեջ քաղհանի աշխատանքների ժամանակին և ճիշտ կատարումը կարող է ապահովել միայն այն պայմանով, յեթե զորահավաքվեն կոլտնտեսային լայն մասսաները, յեթե քաղհանի աշխատանքները կազմակերպվեն ակտիվի վրա հենվելով, յեթե կուսակցական բլիշներն ընդհուպ մոտենան կոլտնտեսային արտադրության, ճիշտ դասավորեն կուսակցականներին ու կոմյերիտականներին բրիգադներում և յեթե նրանք իրենց անձնական որինակով, իսկական հարվածային աշխատանքով իրենց յետևից շանեն կոլտնտեսականների ամբողջ մնացած մասային:

Այս քաղաքական և արտադրական աշխատանքում առանձնապես պատասխանատու յե ՄՏԿ-ների և նրանց քաղբաժինների դերը:

«Տվյալ մոմենտում քաղբաժնի և նրա պետի առաջին խնդիրն է կազմակերպել կուսակցության ու կոմյերիտական ակտիվ ՄՏԿ-ներում և նրանցով սպասարկվող կոլտնտեսություններում, ինչպես և խորհրտնտեսություններում և նրանց բաժանմունքներում, չընկնելով անգամների քանակության յետևից, այլ զվտավոր ուշադրությունը դարձնելով նրանց վորահին, նրանց անձնակազմության՝ կուսակցության և նրանց կարողությանը՝ իրենց յետևից տանելու կոլ-

տնտեսականներին և խորհրտնտեսությունների աշխատողներին:

«Յերկրորդ խնդիրը, վորը պիտի լուծվի առաջինի հետ անխզելի կապակցությամբ,— դա անկուսակցական ակտիվի հավաքումն է կուս-կոմյերիտական բՆԻՆների շուրջը, բոլորովին չմեկուսանալով անկուսակցական կոլտնտեսականներից և խորհրտնտեսությունների բանվորներից, այլ ընդհակառակը, կապ հաստատելով նրանց հետ և աշխատելով, վոր կոլտնտեսությունները— առանց բացառության բոլոր կոլտնտեսությունները իրենց ղեկավարությամբ բոլշևիկական դառնան» (ԿԿ-ի և ԿՎՀ հունվարյան պլենումիվորոշումից):

Կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին բրիգադի արտադրական գործունեյությանը լայն չափով ներգրավելու, նրանց զանազան հարցերի անմիջական քննությանը ներգրավելու (վորոնք կապված են քաղհանի առաջադրության կատարման, արտադրութի նորմաներ սահմանելու, ույթերի դասավորման, ագրոտեխնիկական կանոնների կատարման հետ) կարևորագույն պայմաններից մեկը բրիգադներում արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ճիշտ դրվածքն է:

Արտադրական խորհրդակցությունները, լինելով մասսայական վերահսկողության և արտադրական զատիարակչական աշխատանքի ձևեր, հսկայական ոգնություն են հասցնում բրիգադիլին և կոլտնտեսության վարչությանը արտադրության կազմակերպման ասպարեզում, նրանք ապահովում են կոլտնտեսականների ինքնագործունեյության և նախաձեռնության լայն ծավալումը:

Կոլտնտեսություններում մենք ունենք այնպիսի կոլտնտեսականների կայուն միջուկ, վորոնք հավա-

տարիմ են կուսակցության, հավատարիմ են կոլտնտեսության, վորոնք իսկական հենարան են խորհրդային իշխանության և կոմիված են կողեկտիվացման համար և կուլակի դեմ մղվող պայքարում:

Սակայն առանձին կուսակցական բՆԻՆներ դեռ ևս չգիտեն իրենց ակտիվը, բավականաչափ աշխատանք չեն կատարում նրա հետ: Քաղհանի աշխատանքները նախապատրաստելիս և անցկացնելիս, պետք է ծավալել լայն աշխատանք կոլտնտեսային ակտիվի հետ, պետք է ուժեղացվի ակտիվի ազդեցությունը բրիգադում:

Ինքնագործունեյություն, մասսաների ստեղծագործական վերելք— սրանք սոցիալիստական մեծ շինարարության հաղթանակների անսպառ աղբյուրն են: Այդ աղբյուրը— ասում եր Վ. Ի. Լենինը,— մեզանում նոր ու նոր հաղթանակների համար շատ և շատ մեծ է: «Մենք պետք է նորից ու նորից— գրում է Լենինը,— դիմենք անկուսակցական ակտիվին թե մեր կուսակցական աշխատանքում և թե մեր խորհրդային պրակտիկայում, ավելի և ավելի համարձակ դիմենք անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին»:

Մասսաների ղեկավարման այս բոլշևիկյան կանոնը տեղ-տեղ մոռանում են: Ընկ. Սալիկը հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարում մասնանշում եր.—

«Մենք, բոլշևիկներս, չէյինք ունենա այն հաջողությունները, վորոնք ունենք հիմա, յեթե կուսակցության կողմը չնվանեյինք միլիոնավոր անկուսակցական բանվորների ու գյուղացիների վստահությունը: Իսկ ի՞նչ է պահանջվում դրա համար: Ի՞րա համար պահանջվում

ե, վորպեսզի կուսակցականները հեռու չմնան անկուսակցականներից, վորպեսզի կուսակցականները չսահմանափակվեն իրենց կուսակցական կեդեվում, վորպեսզի նրանք չփխվեն իրենց կուսակցականությամբ, այլ ականջ դնեն անկուսակցականների ձայնին, վորպեսզի վոչ վիայն սովորեցնեն անկուսակցականներին, այլ յեվ սովորեն նրանցից»:

Կոլտնտեսային բջիջն իր ղեկավարութունը պիտի տեղափոխի ստորին ողակը—բերդաղը, կոլտնտեսային ակտիվի հետ կատարվելիք ամբողջ աշխատանքը տեղափոխի դաշտ:

Այստեղ խնդիրը նրանուհն է կայանում, վոր բերդաղներում «ճիշտ դասավորվեն կուսակցության ու կոմյերիտմիության մեջ մնացած կոմունիստներն ու կոմյերիտականները, անսահմանորեն բարձրացվի կոմունիստների պատասխանատվությունն իրենց աշխատանքի համար, կոմունիստներն աշխատեն դուրսանի, ցանիչի վրա, և հաջողեցնել, վորպեսզի նրանք անձնական որինակով, իսկական հարվածային աշխատանքով իրենց յետևից տանեն ազնիվ կոլտնտեսականների մնացած մասին» (Կենտկոմի 1933 թ. մարտի 22-ի վորոշումից):

Քաղհանի ժամանակ կուսակցական-մասսայական աշխատանքի կարևորագույն հարցը պիտի դառնա մեք յերկրամասի սոցիալիսական մրցումը Սոսրին Վոլգյան յերկրամասի հետ:

Հարվածային կոլտնտեսականների առաջին համամիութենական համագումարը հայտարարեց ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների ու խորհրտնտեսությունների համամիութենական մրցություն: Հյուսիսային

կովկասի առաջավոր հարվածային կոլտնտեսականները, կոլտնտեսային ժողովների վորոշումների և յերկրային կազմակերպությունների լիազորության հիմունքով, Մոսկվայում պայմանագիր կնքեցին Ստորին Վոլգայի հետ սոցիալիստական մրցության համար: Պարտավորությունների հիմնական կետերի թվում կան կետեր, վորոնք անմիջականորեն վերաբերում են քաղհանին:

1) Դասերը լիովին մաքել մոլախոսերից: Հորդ յավ վորակով մեակել, լիովին կասարել ագրոմիսիումը:

2) Ճիշտ վորոշված ժամկետում—հնգորյակը մեկ անգամ կազմակերպել աշխուրեի գրանցումն աշխուրեյկներում, առանց բացառության բոլոր կոլցնեստություններում:

3) Լիովին կասարել ԽՍՀՄ կեսգործկուսի վորոշումները ծուլերի դեմ պայքարելու մասին:

4) Սոցիալիսական մրցությանը յեվ հարվածայնությանը ներգրավել յերկրամասի կոլցնեստությունների մեծամասնությանը:

Հյուսիսային կովկասի սոցիալիստական մրցությունը Ստորին Վոլգայի հետ պետք է մի հզոր լծակ դառնա այն պայքարում, վոր մղվում է աշխատանքի կուռ ղիսցիպլինայի, քաղհանի աշխատանքների որինակելի կազմակերպման համար: Սոցիալիստական բարձր բերքի համար մղվող պայքարում պիտի առաջ քաշվեն հազարավոր նոր առաջավոր կոլտնտեսականներ, վորոնց համար կոլտնտեսության մեջ աշխատանքը դարձել է «պասվի, փառքի, առաքինության յեվ հերոսության գործ»:

Կուլակության վնասարարական, քաղքայիչ աշխատանքի դեմ յուրաքանչյուր բերդաղ և խմբակ

պետք է դուրս դա լայն ֆրոնտով, աշխատանքի սո-  
ցիալիստական ձեւերով: Սակայն զեռ քիչ է սոց-  
պարտավորութիւններ վերցնել, պայմանագիր կնքել:  
Դրանով չի վերջանում, այլ սկսվում է պայքարը  
ֆաղհանի ընթացքում, սոցիալիստական բեքի հա-  
մար:

Մինչդեռ գործնականում հաճախ հանդիպում ենք  
այնպիսի փաստերի, յերբ սոցմրցմանը ձեւակնորեն  
են մոտենում: Պայմանագիր են կնքում և զբանով  
գործը վերջացած համարում: Այդպիսի մոտեցումը  
միայն դասակարգային թշնամուն է ձեռնառու:

Սոցպարտավորութիւնների մեջ պետք է ճիշտ  
ցույց տրվի, թե մրցող կողմերն ի՞նչ ժամկետում և  
վորակային ու քանակային ի՞նչ ցուցանիշներով պիտի  
կատարեն:

Առանձին կոլտնտեսականների, բրիգադների ու  
խմբակների միջև սոցիալիստական մրցութիւնը  
պետք է մանրակրկիտ կերպով ստուգվի: Առանց սոց-  
պարտավորութիւնների կատարումն ստուգելու, ա-  
ռանց լավագույն կոլտնտեսականներին հայտնաբերե-  
լու և նրանց խրախուսելու, առանց կեղծ հարվածայ-  
նութեան դեմ կռիւն, սոցիալիստական մրցութիւնն  
ու հարվածայնութիւնը կմնան միայն թղթի վրա:  
Այսպիսի դեպքերում աշխատանքի սոցիալիստական  
ձևերի փոխարեն մենք հանդիպում ենք «աչքին թող  
փչելու»: Թղթի վրա ամեն ինչ կարգին է, իսկ իրա-  
կանում— ծուլն ու կորզիչը, կուլակի աջակիցը, քո-  
ղարկվելով բանավոր «մրցութեամբ», կազմալուծում  
են աշխատանքը: Այսպիսի յերևույթների դեմ ան-  
խնա պայքար պիտի մղել:

Վերցնելով սոցպարտավորութիւն, անհրաժեշտ է  
նրանում մատնանշել, թե նա յերբ յեւ ում կողմից

է ստուգվում: Բրիգադները, կուլակազմակերպիչը, ար-  
տադրական խորհրդակցութիւնը պետք է ապահովեն  
այդ ստուգումը, պարզաւարման համար առաջ քա-  
շելով աչքի ընկնող հարվածայիններին, դասակարգա-  
յին թշնամու վնասարարական, քայքայիչ աշխատանքի  
դեմ ակտիվ պայքարողներին, անխնայորեն մերկաց-  
նելով կեղծ հարվածայիններին:

Խարձրացնելով սոցմրցութեան ու հարվածայնու-  
թեան թափը, զորահավաքելով նրանց աշխատանքի  
հարվածային տեմպերի համար,— հարվածայնորեն անց-  
կացնենք քաղհանը, բարձրացնենք կոլտնտեսային  
դաշտերի բարձրավելութիւնը:



**ԲՈՎԱՆԻՆԿՈՒԹՅՈՒՆ**

Բուլեիկորեն կազմակերպել քաղհանը, բարձրացնել ընդհատվու- թյունը . . . . .	3
Յուրաքանչյուր բրիգադը պետք է կազմակերպե բրիգադը քաղհա- նի հարվածային տեմպերի համար . . . . .	10
Աշխատողները խմբակները կազմակերպումը . . . . .	13
Քաղհանի ազրոպյան կարգաչերը . . . . .	18
Տիրապետել քաղհանի աշխատանքների տեխնիկային . . . . .	25
Արտադրույթի ճիշտ նորմաների համար . . . . .	32
Քաղհանի աշխատանքների գնահատումն աշխուրհով . . . . .	38
Աշխատանքներն ընդունելու կարգը . . . . .	41
Արտադրույթի հաշվառը կատարել ամեն որ . . . . .	46
Ծավալել հուսմամասայական աշխատանքը, ուժեղացնել բրիգադի ակտիվի ազդեցությունը . . . . .	49



3196  
C—X



Ответственный редактор А. Г. АВАКЬЯН  
 Технический редактор Г. М. МАРКАРЬЯН  
 Статформат Б6 125x176 мм.  
 Сдано в набор 3/V 1933 г.  
 Подписано в печать 8/V 1933 г.  
 Типография им. „ Стачки 1902 г.“ СККПТ  
 в Ростове на-Дону  
 Уполкрайлита № Б 217  
 Заказ № 2087 об'ем 1<sup>1/4</sup> п. л. Тираж 2000



Цена 30 коп.  
ԳԻՆԸ ԿՈՍ.

8 ИЮЛ. 1933

16945

21734



На армянском языке

Г. Ф. МУХИН

ЗАДАЧИ БРИГАДЫ  
НА ПРОПОЛКЕ

И. во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒԼՅՈՒՅԸ

ԻՌՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)